Արձանագրություն N 2

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ-ի կարիքների համար հատարարված «ՆՍՄՀԿ-ԳՀԾՁԲ-22/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

01-ը մարտի 2022թ.
ժամը՝ 11:30-ին

Հանձնաժողովն արձանագրեց հայտերի բացումը և որոշեց նիստը շարունակել մասնակիցների կողմից ներկայացված հայտերն ուսումնասիրելուց հետո՝ 02.03.2022թ., ժամը 11:00-ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.

**Հանձնաժողովի նախագահ՝**

- Արտյոմ Մովսեսյան

**Հանձնաժողովի անդամներ՝**

- Արման Սահակյան
- Ալինա Միրզոյան

**Հանձնաժողովի քարտուղար՝** Մ. Մկրտչյան

**«ՆՍՄՀԿ-ԳՀԾՁԲ-22/6» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին**

(Մ. Մկրտչյան)

1. Մրցույթի հայտեր պարունակող ծրարների կազմման և ներկայացման՝ մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանության մասին
2. Մասնակիցների գնային առաջարկների, ինչպես նաև գնային առաջարկների հաշվարկման ճշտության մասին
3. Բացված ծրարներում մրցույթի հրավերով սահմանված պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և դրանց՝ մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանության կազմված լինելու մասին.
4. Տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
5. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՆՍՄՀԿ-ԳՀԾՁԲ-22/6» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
6. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:
7. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
8. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 դեմ՝ 0:*

**1. Մրցույթի հայտեր պարունակող ծրարների կազմման և ներկայացման՝ մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանության մասին**

(Մ. Մկրտչյան)

1.1 «ՆՍՄՀԿ-ԳՀԾՁԲ-22/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թղթային եղանակով հայտ են ներկայացրել՝ «ԱՌԹԱ» ՍՊԸ-ն, «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ն, «Սպայդեր» ՍՊԸ-ն և Գեղամ Թաղլամազյան ԱՁ-ն: Մասնակիցների հայտ պարունակող ծրարները կազմվել և ներկայացվել են «ՆՍՄՀԿ-ԳՀԾՁԲ-22/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան:

**2. Մասնակիցնեի գնային առաջարկների, ինչպես նաև գնային առաջարկների հաշվարկման ճշտության մասին**

(Մ. Մկրտչյան)

2.1 «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության և «ՆՍՄՀԿ-ԳՀԾՁԲ-22/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Չ/հ | Ծառայության անվանումը | Չ/մ | քանակ | ընդհանուր պլանավորվող նախահաշվային գումարը, ներառյալ ԱԱՀ (ՀՀ դրամ) | Մրցույթին մասնակցող կազմակերպության | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Հ/հ | Անվանումները | Գնային առաջարկ /ՀՀ դրամ/ | | |
| | | | | | | | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գին |
| 1 | Այլ հյուրանոցային ծառայություն | դրամ | 1 | 5 760 000 | 1. | Գեղամ Թաղլամազյան Վաղարշակի ԱՁ | 4,000,000 | 0 | 4,000,000 |
| | | | | | 2. | «ԱՌԹԱ» ՍՊԸ | 4,500,000 | 0 | 4,500,000 |
| | | | | | 3 | «Մաստեր Սթայլ» ՍՊԸ | 5,000,000 | 1,000,000 | 6,000,000 |
| | | | | | 4. | «Սպայդեր» ՍՊԸ | 6,000,000 | 0 | 6,000,000 |

3.2 Մասնակիցների հայտ պարունակող ծրարներում առկա գնային առաջարկները և դրանց հաշվարկման ճշտությունը (գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են (ճիշտ են):

3.3 Ըստ ներկայացված տվյալների «Մաստեր Սթայլ» ՍՊԸ -ն ԱԱՀ վճարող է:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 դեմ՝ 0:*

**3. Բացված ծրարներում մրցույթի հրավերով սահմանված պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և դրանց՝ մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանության կազմված լինելու մասին.մասին**

(Մ. Մկրտչյան)

3.1 Մասնակիցների հայտ պարունակող ծրարներում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են, որոնք համապատասխանում են մրցույթի հրավերով սահմանված պայմաններին(պահանջներին) և գնահատվել են բավարար, **բացառությամբ հետևյալ դեպքի՝**

**Գեղամ Թադևոսյան Վաղարշակի ԱՁ-ի** կողմից ներկայացված «ՆՍՄՀԿ-ԳՀԾՁԲ-22/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակցելու դիմում հայտարարությունում Հավելված 1-ում բացակայում է **էլեկտրոնային փոստի հասցեն**: Ուստի անհրաժեշտ է Հավելված 1-ում կատարել շտկում և այն լրացնել հրավերի պահանջներին համապատասխան:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել **«Գեղամ Թադևոսյան ԱՁ**-ին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը:

**03.03.2022թ., ժամը 11:00-ին** հանձնաժողովն արձանագրեց, որ Գեղամ Թադևոսյան Վաղարշակի ԱՁ-ի կողմից սահմանված ժամկետում և կարգով ներկայացրվել է Հավելված 1-ը, ուստի որոշեց շարունակել նիստը: Գնահատող հանձնաժողովը ներկայացված փաստաթղթուղթն ուսումնասիրեց և արձանագրեց, որ վերջինիս կողմից շտկվել է անհամապատասխանությունը, ուստի մասնակցի հայտը գնահատեց բավարար՝ հրավերի պահանջներին համապատասխան:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

<u>Տեղեկատվություն բանակցությունների վարման մասին</u>

(Մ. Մկրտչյան)

4.1 Քանի որ «ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ-ի կարիքների համար «Այլ հյուրանոցային ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «**ՆՍՄՀԿ-ԳՀԾՁԲ-22/6**» ծածկագրով գնման ընթացակարգը կազմակերպվել է ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի մասի հիման վրա, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները, որոշեց նիստը կասեցնել և գների նվազեցման նպատակով **09.03.2022թ. ժամը 12:30-ին**, ՀՀ, ք.Երևան, Թումանյան 10, բն.7 հասցեում, բավարար գնահատված և տվյալ չափաբաժնի մասով գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներին՝ **«ԱՌԹԱ», «Մաստեր Սթայլ»,«Սպայդեր» ՍՊԸ-ների և Գեղամ Թադևոսյան Վաղարշակի ԱՁ-ի** հետ կազմակերպել միաժամանակյա բանակցություններ և նիստը շարունակել այդ օրը:

Գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրը վերը նշված մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցեց նշված բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0*

**09.03.2022թ. ժամը 12:30-ին** կայացած նիստում հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետին կազմակերպված բանակցությանը արդյունքում առաջարկվեցին հետևյալ գները:

| Չ/հ | Ծառայության անվանումը | Չ/մ | քանակ | ընդհանուր պլանավորվող նախահաշվային գումարը, ներառյալ ԱԱՀ (ՀՀ դրամ) | Մրցույթին մասնակցող կազմակերպության | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Հ/հ | Անվանումները | Գնային առաջարկ /ՀՀ դրամ/ | | |
| | | | | | | | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գին |
| | Այլ հյուրանոցային ծառայություն | դրամ | 1 | 5 760 000 | 1 | «Մաստեր Սթայլ» ՍՊԸ | 3,350,000 | 670000 | 4,020,000 |
| | | | | | 2 | «Սպայդեր» ՍՊԸ | 3,399,000 | 0 | 3,399,000 |

**5. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՆՍՄՀԿ-ԳՀԾՁԲ-22/6» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված և մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցի որոշման մասին.**

(Մ. Մկրտչյան)

5.1 Հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, հիմք ընդունելով գնահատման թերթիկները, գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՆՍՄՀԿ-ԳՀԾՁԲ-22/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատել և ընտրված մասնակից ճանաչել *«Մաստեր Մեթալ» ՍՊԸ-ին:*

***Բավարար գնահատված մյուս մասնակիցները ճանաչվեցին հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցներ՝ ըստ ներկայացրած գնային առաջակի շահավետության:***

5.2 Հանձնաժողովը որոշեց հաստատել՝«ՆՍՄՀԿ-ԳՀԾՁԲ-22/6» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

5.3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անգործության ժամկետ սահմանվել է 5 օրացուցային օր:

5.4 Պայմանագիր կնքելու նպատակով ընտրված մասնակցին ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել կից գրությամբ պայմանագրի նախագիծը երկու օրինակից, ինչպես նաև որակավորման ապահովումը (տուժանքի մասին համաձայնագիր և կից վճարման պահանջագիր), պայմանագրի կատարման ապահովումը (տուժանքի մասին համաձայնագիր և կից վճարման պահանջագիր):

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**6. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:**

(Մ․ Մկրտչյան)

6.1 «ՆՍՄՀԿ-ԳՀԾՁԲ-22/6» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝3 , դեմ՝ 0:*

**7. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

(Մ․ Մկրտչյան)

7.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**8. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

(Մ․ Մկրտչյան)

8.1 «ՆՍՄՀԿ-ԳՀԾՁԲ-22/6» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել ոչ ուշ, քան գնման պայմանագիր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11:00-ն ՀՀ, ք.Երևան, Թումանյան 10, բն.7 հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝0:*

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ ____________ Ա.Մովսեսյան

հանձնաժողովի անդամներ՝ ____________ Ա. Սահակյան

____________ Ա.Միրզոյան

հանձնաժողովի քարտուղար՝ ____________ Մ. Մկրտչյան